

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2012թ. մայիսի 3-4-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Վիճակագրությունը և փաստերի վրա հիմնված որոշումների կայացումը» խորագրով սեմինարին,
- ✓ 2012.թ. մայիսի 15-18-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության վարչատնտեսական աշխատանքների բաժնի պետ Լ. Գևորգյանը և նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հուսիկյանը մասնակցել են ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած CensusInfo-ի վերաբերյալ ՄԱԿ-ի տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2012թ. մայիսի 14-18-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Սանտյագոյում (Չիլի) կայացած «Գիտելիքների փոխանցում ՀՁՆ-ի մոնիթորինգի և հաշվետվողականության կատալեզգործման նպատակով» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. մայիսի 16-ից – հուլիսի 21-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության Տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը մասնակցել է ք. Չիբայում (Ճապոնիա) կայացած «Տեղեկատվական կառավարման և հարակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառումը պաշտոնական վիճակագրության համար» խորագրով դասընթացին,
- ✓ 2012թ. մայիսի 15-17-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Արտադրության ինդեքսների հաշվարկ» խորագրով սեմինարին,

- ✓ 2012թ. մայիսի 14-18-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «Բնակչության հավանական կանխատեսումներ» խորագրով վերապատրաստման դասընթացին,
- ✓ 2012.թ. մայիսի 21-25-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության պետի տեղակալ Բ. Գևորգյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Ռեգիստրների օգտագործումը մարդահամարների ժամանակ» և «Մարդահամարներ և կացարանների համատարած հաշվառում» խորագրերով հանդիպումներին,
- ✓ 2012թ. մայիսի 21-23-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Գների վիճակագրություն» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. մայիսի 27-ից - հունիսի 2-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաբախանյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լատվիա) կայացած «Պարենային հաշվեկշռի կազմում» խորագրով ուսումնական այցելությանը,
- ✓ 2012 թ. մայիսի 28-ից-31-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Գենդերային վիճակագրության մշակում» խորագրով դասընթացին,
- ✓ 2012 թ. մայիսի 30-ից - հունիսի 1-ը ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Աթենքում (Հունաստան) կայացած «Պաշտոնական վիճակագրության որակի Եվրոպական համաժողով» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2012թ. մայիսի 29-ից – հունիսի 1-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ

- Գ. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Սպառողական գների ինդեքս» խորագրով սեմինարին,
- ✓ 2012թ. հունիսի 4-5-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած «Արտակարգ իրավիճակներում պատրաստվածություն ապահովելու և արձագանքման միջոցներ ձեռնարկելու նպատակով տեղեկատվության կառավարում» խորագրով սեմինարին,
 - ✓ 2012թ. հունիսի 10-26-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն) կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման (Ռիո+20) համաշխարհային գազաթաժողովի նախապատրաստական աշխատանքներին և գազաթաժողովին,
 - ✓ 2012թ. հունիսի 10-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ Ն. Աստվածատուրովան և Ս. Խաչատրյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Հարմոնիզացված սպառողական ինդեքսի ներդրում» և «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում» բաղադրիչների շրջանակում ուսումնական այցելություններին,
 - ✓ 2012 թ. հունիսի 12-17-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ստոկհոլմում (Շվեդիա) կայացած 2012թ. Եվրոպայի բնակչության հարցերով կոնֆերանսին,
 - ✓ 2012թ. մայիսի 18-22-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է

- ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ երկրներում սպառողական ապրանք-ներկայացուցիչների գնային տեղեկատվության ստուգման և համաձայնեցման նպատակով իրականացվող աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2012թ. հունիսի 26-30-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Որակը վիճակագրությունում. մեթատվյալներ» խորագրով Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար բարձր մակարդակի սեմինարին: